# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# N ՀԳԴ-ՄԱԾՁԲ-22/18

ք. Երևան «04» մայիսի 2022թ.

ՀՀ դատախազությունն, ի դեմս գլխավոր քարտուղար Հ. Նավասարդյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Նիսսան Սերվիս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Ենգիբարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայության** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության **առավելագույն** գինը կազմում է 1700000 (մեկ միլիոն յոթ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

**Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝**

**ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.**

**ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.**

**ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.**

**Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.**

**Ք-ն մատուցված ծառայության քանակն է:**

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1

կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 13 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ դատախազություն | «Նիսսան Սերվիս» ՍՊԸ |
| ք.Երևան, Վ.Սարգսյան 5 | ք. Երևան, Տիգրանյան 1, փակուղի 1 |
| ՀՀ ֆին. նախ.աշխ.գործ.վարչ. | «Ինեկոբանկ»ՓԲԸ |
| Հ/Հ 900011180081 | Հ/Հ 205282213771 |
| ՀՎՀՀ 02506634 | ՀՎՀՀ 00208963 |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

*Հավելված N 1*
*«04» մայիսի 2022թ. կնքված*
*N ՀԳԴ-ՄԱԾՁԲ-22/18 ծածկագրով պայմանագրի*

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | մատուցման | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը /ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | հասցեն | ժամկետը** |
| 1 | 50111130/5 | Մարդատար ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման SU-1, SU-2 ծառայություններ: *տեխնիկական բնութագիրը ըստ չափաբաժինների տես կցված **տեխ. բնութագիր** Excel ֆայլում: | դրամ | 1700000 | 1 | ք. Երևան, Վ. Սարգսյան 5 | պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 25.12.2022թ. |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
**ՀՀ դատախազություն**
**ք.Երևան, Վ.Սարգսյան 5**
**ՀՀ ֆին. նախ.աշխ.գործ.վարչ.**
**Հ/Հ 900011180081**
**ՀՎՀՀ 02506634**

/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**
**«Նիսսան Սերվիս» ՍՊԸ**
**ք. Երևան, Տիգրանյան 1, փակուղի 1**
**«Ինեկոբանկ»ՓԲԸ**
**Հ/Հ 205282213771**
**ՀՎՀՀ 00208963**

/ստորագրություն/
Կ.Տ

# Տեխնիկական բնութագիր - գնացուցակ

ՀՀ դրամ

| Հ/հ | ավտոմեքենաների պահպանման ծառայություններ, այդ թվում | | 1-ին չափաբաժին | |
|---|---|---|---|---|
| | | Չ/մ | NISSAN X-TRAIL | Renault Arkana |
| 1 | Համակարգչային ախտորոշում | հատ | 4000 | 4000 |
| 2 | Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում | հատ | 5000 | 3000 |
| | **2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ** | | | |
| 3 | Յուղի և յուղի զտիչի փոխարինում | հատ | 3000 | 3000 |
| 4 | Օդի զտիչի փոխարինում | հատ | 2000 | 2000 |
| 5 | Օդորակիչի զտիչի փոխարինում | հատ | 3000 | 2000 |
| 6 | Բենզամղիչի հանում և տեղադրում | հատ | 15000 | 15000 |
| 7 | Վառելիքի բաքի հանում և տեղադրում | հատ | 15000 | 24000 |
| 8 | Ակսելերատորի հանում և տեղադրում | հատ | 5000 | 5000 |
| 9 | Ակսելերատորի մաքրում | հատ | 6000 | 10000 |
| | **3. Սառեցման և արտածման համակարգ** | | | |
| 10 | Փոկի հանում և տեղադրում | հատ | 5000 | 5000 |
| 11 | Հովհարի հանում և տեղադրում | հատ | 8000 | 15000 |
| 12 | Ռադիատորի հանում և տեղադրում | հատ | 10000 | 25000 |
| 13 | Ռադիատորի վերանորոգում | հատ | 30000 | 30000 |
| 14 | Վառարանի ռադիատորի հանում և տեղադրում | հատ | 60000 | 60000 |
| 15 | Թերմոստատի փոխարինում | հատ | 10000 | 10000 |
| 16 | Ընդարձակող բաքի փոխարինում | հատ | 5000 | 5000 |
| 17 | Խլարարի հանում և տեղադրում | հատ | 5000 | 5000 |
| 18 | Հովացման համակարգի փողրակի հանում և տեղադրում | հատ | 5000 | 5000 |
| 19 | Հովացման հեղուկի փոխարինում | հատ | 5000 | 5000 |
| 20 | ԱՓՏ-ի յուղի և զտիչի փոխարինում | հատ | 15000 | |
| 21 | Կարդանային լիսեռի հանում և տեղադրում | հատ | 5000 | |
| | **4. Կախոց** | | | |
| 22 | Տրավերսի հանում և տեղադրում | հատ | 30000 | 30000 |
| 23 | Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում | հատ | 10000 | 6000 |
| 24 | Ձախ կամ աջ հոդակապի հանում և տեղադրում | հատ | 10000 | 10000 |
| 25 | Անվակունդի հանում և տեղադրում | հատ | 9000 | 9000 |
| 26 | Անվակունդի առանցքակալի փոխարինում | հատ | 1025 | 1025 |
| 27 | Ձախ կամ աջ հոդակապի խցուկների փոխարինում | հատ | 10000 | 10000 |
| 28 | Ցնցամեղմիչի թասակի փոխարինում | հատ | 5050 | 5000 |
| 29 | Զսպանակի հանում և տեղադրում | հատ | 2500 | 5000 |
| 30 | Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում | հատ | 5050 | 5050 |
| 31 | Ցնցամեղմիչի լիցքավորում | հատ | 3500 | 6000 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 32 | Ներքևի լծակի հանում և տեղադրում | հատ | 5050 | 7000 |
| 33 | Ներքևի լծակի վռանների փոխարինում | հատ | 1025 | 1025 |
| 34 | Առջևի աջ կամ ձախ ձգանների հանում և տեղադրում | հատ | 5050 | 5050 |
| 35 | Գնդե հոդակապերի փոխարինում | հատ | 5000 | |
| 36 | Ծայրակաների հանում և տեղադրում | հատ | 3000 | 5050 |
| 37 | Առջևի կայունարարի վռանների փոխարինում | լրակազմ | 10000 | 3500 |
| 38 | Հետևի կայունարարի վռանների փոխարինում | լրակազմ | 4050 | 3500 |
| 39 | Հետևի զսպանակի փոխարինում | հատ | 5000 | 5000 |
| 40 | Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում | հատ | 5000 | 5000 |
| 41 | Առջևի կամ հետևի մետաղաձողի (շտանգա) հանում և տեղադրում | հատ | 2525 | 3000 |
| 42 | Առջևի կամ հետևի մետաղաձողի (շտանգա) վռանի փոխարինում | հատ | 500 | 500 |
| 43 | Կայունարարի կանգնակների հանում և տեղադրում | հատ | 2025 | 2025 |
| 44 | Անվաբացքի կարագավորում | հատ | 10100 | 10100 |
| | **5. Ղեկային մեխանիզմ** | | | |
| 45 | Ղեկային կալունի հանում և տեղադրում | հատ | 15000 | 25000 |
| 46 | Ղեկային կալունի վերանորոգում | հատ | 60000 | 60000 |
| 47 | Ղեկային ձողի հանում և տեղադրում | հատ | 3500 | 10000 |
| 48 | Ղեկային ձողի նորոգում | հատ | 6250 | 20000 |
| 49 | Ղեկային ժապավենի փոխարինում | հատ | 6000 | 6000 |
| | **5. Արգելակային համակարգ** | | | |
| 50 | Գլխ. գլանի հանում և տեղադրում | հատ | 5000 | 20000 |
| 51 | Վակուումային ուժեղարարի հանում և տեղադրում | հատ | 7500 | 20000 |
| 52 | Արգելակային համակարգի օդահանում | հատ | 3000 | 4000 |
| 53 | Առջևի սուպպորտի հանում և տեղադրում | հատ | 4000 | 4000 |
| 54 | Հետևի սուպպորտի հանում և տեղադրում | հատ | 4000 | 4000 |
| 55 | Առջևի սուպպորտի վերանորոգում | հատ | 5000 | 5000 |
| 56 | Հետևի սուպպորտի վերանորոգում | հատ | 5000 | 5000 |
| 57 | Արգելակային փողրակի փոխարինում | հատ | 2500 | 2500 |
| 58 | Առջևի արգելակային կոճղակների փոխարինում | հատ | 3250 | 3250 |
| 59 | Հետևի արգելակային կոճղակների փոխարինում | հատ | 3250 | 6000 |
| 60 | Առջևի արգելակային սկավառակի կամ թմբուկի հանում և տեղադրում | հատ | 5000 | 5000 |
| 61 | Հետևի արգելակային սկավառակի կամ թմբուկի հանում և տեղադրում | հատ | 5000 | 5000 |
| 62 | Արգելակային սկավառակի հղկում | հատ | 6000 | 6000 |
| 63 | Ձեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում | հատ | 5000 | 5000 |
| 64 | Ձեռքի արգելակի կարգավորում | հատ | 1250 | 1250 |
| | **7. Էլեկտրասարքավորում** | | | |
| 65 | Էլեկտրասարքավորման վերանորոգում | ժամ | 8000 | 8000 |
| 66 | Լապտերի լամպի փոխարինում | հատ | 1500 | 1500 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 67 | Էլեկտրական տվիչների փոխարինում | հատ | 3000 | 3000 |
| 68 | Էլեկտրական անջատիչների փոխարինում | հատ | 2000 | 2000 |
| 69 | Լապտերների կարգավորում | հատ | 3000 | 3000 |
| 70 | Վառոցքի կոճի փոխարինում | հատ | 2500 | 2500 |
| 71 | Վառոցքի մոմերի փոխարինում | հատ | 10000 | 10000 |
| 72 | Կոնդիցիոների լիցքավորում | հատ | 15000 | 15000 |
| | **8. Այլ ծառայություններ** | | | |
| 73 | Անիվի հանում և տեղադրում | հատ | 500 | 500 |
| 74 | Անվադողի քանդում և հավաքում | հատ | 1025 | 1025 |
| 75 | Անիվի հավասարակշռում | հատ | 1025 | 1025 |
| 76 | CO-զոդման աշխատանքներ | սմ | 1025 | 1025 |
| 77 | Խառատային աշխատանքներ | կտոր | 5000 | 5000 |
| 78 | Փականագործի աշխատանքներ | ժամ | 8000 | 8000 |
| | **Պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները** | | | |
| | **1.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ** | | | |
| 1.1 | Յուղ շարժիչի կիսասինթետիկ | լիտր | 4000 | 4000 |
| 2.1 | Յուղ շարժիչի սինթետիկ | լիտր | 5000 | 5000 |
| 3.1 | Յուղի զտիչ | հատ | 4250 | 5000 |
| 4.1 | Յուղի փողրակ | հատ | 15000 | 15000 |
| 5.1 | Վառոցքի մոմ | հատ | 11000 | 11000 |
| 6.1 | Վառելանյութի մղիչ էլեկտրական | հատ | 150000 | 165000 |
| 7.1 | Վառելանյութի փողրակ | հատ | 18000 | 15000 |
| 8.1 | Օդի զտիչ | հատ | 11000 | 11000 |
| 9.1 | Օդորակիչի զտիչ | հատ | 12000 | 9000 |
| 10.1 | Ջերմաստիճանային տվիչ | հատ | 26000 | 30000 |
| 11.1 | Յուղի տվիչ | հատ | 27000 | 30000 |
| 12.1 | Բաշխիչ լիսեռի տվիչ | հատ | 26000 | 30000 |
| 13.1 | Ծնկաձև լիսեռի տվիչ | հատ | 33000 | 33000 |
| 14.1 | Մաքրող հեղուկ ABRO | հատ | 2025 | 2000 |
| 15.1 | Օդի ծախսի տվիչ | հատ | 75000 | 90000 |
| | **2. Սառեցման և արտածման համակարգ** | | | |
| 16.1 | Հովհար | հատ | 50000 | 165000 |
| 17.1 | Ռադիատոր | հատ | 180000 | 320000 |
| 18.1 | Ընդարձակող բաք | հատ | 45000 | 52000 |
| 19.1 | Ընդարձակող բաքի փական | հատ | 6500 | 8000 |
| 20.1 | Հովացման համակարգի փողրակ | հատ | 12500 | 12000 |
| 21.1 | Թերմոստատ | հատ | 15000 | 25000 |
| 22.1 | Սառեցման հեղուկ | լիտր | 3500 | 3500 |
| 23.1 | Հոլովակ | հատ | 30000 | 30000 |
| 24.1 | Փոկ | հատ | 15000 | 23000 |
| 25.1 | Խլարարի ներդիր | հատ | 8000 | 8000 |
| 26.1 | Խլարարի կախոց | հատ | 10000 | 8000 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 27.1 | Կրոնշտեյն | հատ | 12000 | 10000 |
| 28.1 | Անուր (Խամուտ) | հատ | 500 | 500 |
| 29.1 | Խլարար | հատ | 120000 | 360000 |
| 30.1 | Վառարանի ռադիատոր | հատ | 75000 | 135000 |
| 31.1 | Վառարանի շարժիչ | հատ | 90000 | 150000 |
| 32.1 | ԱՓՏ-ի զտիչ | հատ | 7000 | 8000 |
| 33.1 | Տրանսմիսսիոն յուղ | լիտր | 10000 | 10000 |
| 34.1 | ԱՓՏ յուղ | լիտր | 10000 | 10000 |
| 35.1 | Հերմետիկ | հատ | 2025 | 2025 |
| | **3. Կախոց** | | | |
| 36.1 | Բարձիկ | հատ | 85000 | 115000 |
| 37.1 | Տրավերս | հատ | 500000 | 750000 |
| 38.1 | Ձախ կամ աջ հոդակապ | հատ | 150000 | 255000 |
| 39.1 | Ձախ կամ աջ հոդակապի փոշեթիկնոց | հատ | 20000 | 32000 |
| 40.1 | Անվակունդ | հատ | 110000 | 90000 |
| 41.1 | Անվակունդի խցուկ | հատ | 10000 | 12000 |
| 42.1 | Ձախ կամ աջ հոդակապի խցուկ | հատ | 10000 | 5000 |
| 43.1 | Հարվածամեղմիչի թասակ | հատ | 22000 | 20000 |
| 44.1 | Զսպանակ | հատ | 50000 | 50000 |
| 45.1 | Առջևի ցնցամեղմիչ | հատ | 105000 | 70000 |
| 46.1 | Հարվածամեղմիչի փոշեթիկնոց | հատ | 15000 | 14000 |
| 47.1 | Ցնցամեղմիչի վռան | հատ | 6000 | 6000 |
| 48.1 | Ներքևի լծակ | հատ | 125000 | 70000 |
| 49.1 | Ներքևի լծակի վռան | հատ | 7500 | 8000 |
| 50.1 | Գնդե հոդակապ | հատ | 8000 | 12000 |
| 51.1 | Առջևի կայունարարի վռան | հատ | 5000 | 4000 |
| 52.1 | Հետևի կայունարարի վռան | հատ | 5000 | 4000 |
| 53.1 | Կայունարարի կանգնակ | հատ | 12500 | 14000 |
| 54.1 | Հետևի ցնցամեղմիչ | հատ | 50000 | 55000 |
| 55.1 | Աջ կամ ձախ ձգան | հատ | 23000 | 60000 |
| 56.1 | Ծայրակալ | հատ | 35000 | 55000 |
| 57.1 | Քսայուղ լիտոլ | գրամ | 1000 | 1000 |
| 58.1 | Քսայուղ Շռուս | գրամ | 1200 | 1200 |
| | **4. Ղեկային մեխանիզմ** | | | |
| 59.1 | Ղեկային կալուն | հատ | 350000 | 915000 |
| 60.1 | Ղեկային կալունի խաչուկ | հատ | 32500 | 35000 |
| 61.1 | Հիդրոուժեղարարի փողրակ | հատ | 120000 | 120000 |
| 62.1 | Ղեկային ժապավեն | հատ | 50000 | 50000 |
| | **5. Արգելակային համակարգ** | | | |
| 63.1 | Գլխ. գլան | հատ | 75000 | 90000 |
| 64.1 | Վակուումային ուժեղարար | հատ | 270000 | 250000 |
| 65.1 | Արգելակային փողրակ | հատ | 17500 | 18000 |
| 66.1 | Սուպպորտի ուղղորդիչ | հատ | 10000 | 10000 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 67.1 | Սուպպորտի մանժետ | հատ | 20000 | 20000 |
| 68.1 | Առջևի արգելակային կոճղակների կոմպլեկտ | հատ | 40000 | 50000 |
| 69.1 | Հետևի արգելակային կոճղակների կոմպլեկտ | հատ | 35000 | 40000 |
| 70.1 | Առջևի արգելակային սկավառակ կամ թմբուկ | հատ | 75000 | 230000 |
| 71.1 | Հետևի արգելակային սկավառակ կամ թմբուկ | հատ | 80000 | 210000 |
| 72.1 | Ձեռքի արգելակի ճոպան | հատ | 40000 | 40000 |
| 73.1 | ABS-ի տվիչ | հատ | 42500 | 65000 |
| 74.1 | Արգելակային հեղուկ՝ DOT-3 | գրամ | 2000 | 2000 |
| | **6. Էլեկտրասարքավորում** | | | |
| 75.1 | Լամպ | հատ | 10000 | 10000 |
| 76.1 | Լամպ ԼԵԴ | հատ | 50000 | 45000 |
| 76.1 | Վառոցքի կոճ | հատ | 35000 | 30000 |
| 77.1 | Ապակելվացիչ | հատ | 15000 | 32000 |
| 78.1 | Ապակելվացիչի պոմպ | հատ | 15000 | 25000 |
| 79.1 | Ապակելվացիչի հեղուկի տարա | հատ | 12500 | 45000 |
| 80.1 | Ապակեմաքրիչի շարժիչ | հատ | 150000 | 250000 |
| | **Ընդամենը ըստ սյունակների** | | **4607025** | **6729625** |
| | **Ընդհանուր գումարը ըստ չափաբաժնի** | | **11336650** | |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ դատախազություն
ք.Երևան, Վ.Սարգսյան 5
ՀՀ ֆին. նախ.աշխ.գործ.վարչ.
Հ/Հ 900011180081
ՀՎՀՀ 02506634

/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**
«Նիսսան Սերվիս» ՍՊԸ
ք. Երևան, Տիգրանյան 1, փակուղի 1
«Ինեկոբանկ»ՓԲԸ
Հ/Հ 205282213771
ՀՎՀՀ 00208963

/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված N 2*
*«04» մայիսի 2022թ. կնքված*
*N ՀԳԴ-ՄԱԾՁԲ-22/18 ծածկագրով պայմանագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

հազար ՀՀ դրամ

| | | | Ծառայության | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝այդ թվում** | | | | |
| | | | I եռամսյակ | II եռամսյակ | III եռամսյակ | IV եռամսյակ | Ընդամենը |
| 1 | 50111130/5 | **NISSAN X-TRAIL և Renault Arkana** ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ սպասարկում | - | 850.0 | 1275.0 | 1700.0 | 1700.0 |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
**ՀՀ դատախազություն**
**ք.Երևան, Վ.Սարգսյան 5**
**ՀՀ ֆին. նախ.աշխ.գործ.վարչ.**
**Հ/Հ 900011180081**
**ՀՎՀՀ 02506634**

/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**
**«Նիսսան Սերվիս» ՍՊԸ**
**ք. Երևան, Տիգրանյան 1, փակուղի 1**
**«Ինեկոբանկ»ՓԲԸ**
**Հ/Հ 205282213771**
**ՀՎՀՀ 00208963**

/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված 3*
*«04» մայիսի 2022թ. կնքված*
*N ՀԳԴ-ՄԱԾՁԲ-22/18 ծածկագրով պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| _____ | _____ |
| _____ | _____ |
| գտնվելու վայրը _____ | գտնվելու վայրը _____ |
| հհ _____ | հհ_____ |
| _____ | _____ |
| հվհհ _____ | հվհհ_____ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«  » «  » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «  » «  » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ծառայությունը հանձնեց | Ծառայությունն ընդունեց |
|---|---|
| _____ | _____ |
| ստորագրություն | ստորագրություն |
| _____ | _____ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 3.1*
*«04» մայիսի 2022թ. կնքված*
*N ՀԳԴ-ՄԱԾՁԲ-22/18 ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____-ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն